Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ՝ ՀԱՆՈՒՆ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Խ. Հ. ԲԱԳԱՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմական հաղթանակի անմիջական հետևանքներից մեկն էլ միջազգային պրոլետարիատի հեղափոխական պայքարի գլխավոր շտաբի՝ Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծումն էր, որի փառավոր 50-ամյակը լրացավ այս տարվա մարտին։

Վ. Ի. Լենինի ջանքերով և գլխավորությամբ Կոմունիստական ինտերնացիոնալը ստեղծվեց միջազգային օպորտունիզմի և II ինտերնացիոնալի կուսակցությունների դեմ մղվող անհաշտ պայքարի պայմաններում։

Դեռ առաջին համաշխարհային պատերազմը չսկսված, II ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունները հրաժարվեցին Շտուտգարտի, Կոպենհագենի և Բազելի 1912 թ. արտակարգ կոնգրեսների որոշումներից, որոնք, ինչպես հայտնի է, կոչ էին անում կանխել վերահաս իմպերիալիստական պատերազմը, իսկ եթե այն սանձազերծվի, ապա իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի։ Ծառայելով միջազգային իմպերիալիզմի ագրեսիվ շահերին, II ինտերնացիոնալի կուսակցությունները հանդես եկան «իմպերիալիստական հայրենիքի» պաշտպանության լոզունգներով, քվեարկեցին ռազմական վարկերի ավելացման օգտին և կանգնեցին սոցիալ-շովինիստական դիրքերի վրա։

Պաշտպանելով իմպերիալիստական պատերազմի սանձազերծումը, Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներ Շայդեմանը, Նոսկեն, Էբերտը և ուրիշներ, ուղղակի հայտարարում էին, թե «Վիլհելմ 2-րդը այս վերջին տարիներին իրեն զրսևորել է որպես խաղաղության պահպանման անկեղծ բարեկամ»[1], որ «...մենք հայրենիքը չենք թողնի առանց օգնության»[2]։

Ավելին, մարքսիզմի գլխավոր ռևիզիոնիստներից մեկը՝ Ֆոլմարը, պաշտպանելով իմպերիալիստական պատերազմի սանձազերծումը, նշում էր, թե «ներկա ժամանակում գերմանական ամբողջ ժողովուրդը տոգորված է միատեսակ ձգտումներով՝ այն է պաշտպանել հայրենիքը, նրա անկախությունը. նրա կուլտուրական կազմակերպությունները թշնամիներից, որոնք նրան շրջապատում են, և չհանգստանալ մինչև այն ժամանակ, քանի դեռ բոլոր թշնամիները չեն ջախջախվել»[3]։ Այս ամենից բացի, գերմանական աջ սոցիալ-դեմոկրատները 1918 թվականին բլոկ կազմելով յունկերության, բուրժուազիայի և կայզերական գեներալների հետ, արյան մեջ խեղդեցին նոյեմբերյան հեղափոխությունը և դաժան գատաստան տեսան գերմանական պրոլետարիատի ականավոր առաջնորդներ Ռ. Լյուքսեմբուրգի, Կ. Լիբկնեխտի և մյուսների հետ։

---

1 Տե՛ս Կոմինտերնի մանիֆեստը ուղղված համաշխարհային պրոլետարիատին, ընդունված Կոմինտերնի V կոնգրեսում, Թիֆլիս, 1924, էջ 38։

2 Նույն տեղում, էջ 38։

3 Уильям З. Фостер, История трех интернационалов, М., 1959, էջ 238։

Եթե Գերմանիայի յունկերությունն ու բուրժուազիան կարողացան 1918 թ. պահպանել իրենց սեփականությունն ու իշխանությունը, դրա համար նրանք լիովին պարտական էին Շայդեմանին, Էբերտին, Կաուցկուն և Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մյուս առաջնորդներին[4]։

Նույնը կարելի է ասել նաև II ինտերնացիոնալի մյուս կուսակցությունների մասին, որոնք իրենց երկրների բուրժուազիայի և գլխավոր շտաբների հետ ձայնակցելով, սանձազերծեցին պատերազմը։

II ինտերնացիոնալի կուսակցությունների ղեկավարներից շատ-շատերը (Էմիլ Վանդերվելդը Բելգիայում, Արթուր Հենդերսոնը Անգլիայում, Ժյուլ Գեդը, Մարսել Սամբան, Ալբերտ Թոման Ֆրանսիայում և ուրիշներ) բուրժուական կառավարությունների կազմում մինիստրական զանազան, մինչև իսկ ռազմական մինիստրի պոստեր ստանձնեցին։ Վ. Ի. Լենինը, «Կոմունիստական ինտերնացիոնալը» խորագրով աշխատության մեջ, դատապարտելով II ինտերնացիոնալի կուսակցությունների այդ դավաճանությունը, գրում է. «Նրանք դավաճանեցին բանվորներին, նրանք օգնեցին կոտորածը երկարաձգելու, նրանք սոցիալիզմի թշնամիներ դարձան, նրանք կապիտալիստների կողմն անցան»[5]։

Վ. Ի. Լենինը անհաշտ պայքար էր մղում նաև միջազգային ցենտրալիզմի դեմ, որի ղեկավարները (Կաուցկի, Վիկտոր Ադլեր, Տուրայի, Մակդոնալդ) պատերազմի սկզբնական շրջանում հայտարարում էին, թե «...ինտերնացիոնալը միայն խաղաղության գործիք է»[6], իսկ որոշ ժամանակ անց բացահայտ կերպով պաշտպանում իմպերիալիստական պատերազմը, այս անգամ էլ հայտարարելով, թե «...ներկա պատերազմը իր բնույթով պաշտպանողական պատերազմ է»[7]։

Քննադատելով միջազգային ցենտրիզմի գաղափարախոս Կ. Կաուցկուն, Վ. Ի. Լենինը գրում է. «Մարքսիզմը ռեակցիոն քաղքենիական նվոցով փոխարինելու գործում ռեկորդ խփեց պարոն Կաուցկին, նա մի երգ է ձգում, ողբում է տեղի ունեցողի վրա, գանգատվում է, լալիս, սարսափում, քարոզում է հաշտություն... իսկ երբ գործը հասավ դասակարգային պայքարի մեծագույն սրմանը և սոցիալիզմի նախօրյակին, մեր իմաստունը գլուխը կորցրեց, երկար լաց եղավ և սովորական ֆիլիստեր դարձավ»[8]։

Բոլշևիկների կուսակցությունը միջազգային բանվորական շարժման մեջ միակ հետևողական հեղափոխական կուսակցությունն էր, որը մերկացնում էր II ինտերնացիոնալի կուսակցությունների շովինիստական գործունեությունը և պատերազմի իմպերիալիստական, կողոպտիչ բնույթը[9]։

II ինտերնացիոնալը, որը հիմնադրվել էր 1889 թ., իր 25-ամյա գործունեությունից հետո, առաջին համաշխարհային պատերազմի առաջին իսկ տարիներին իր շովինիստական քաղաքականության պատճառով անփառունակ կրախի մատնվեց։ Նրա սնանկացումը պատահական երևույթ չէր. այն տեղի ունեցավ օպորտունիստական կուսակցությունների քայքայիչ աշխատանքի հետևանքով, որն արտահայտվում էր սոցիալիստական հեղափոխության

---

4 Տե՛ս Կոմինտերնի մանիֆեստը ուղղված համաշխարհային պրոլետարիատին, Թիֆլիս, 1924։
5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, Երևան, 1951, էջ 287։
6 Տե՛ս «Протоколы первого конгресса Коминтерна», Петроград, 1921, էջ 157։
7 Уильям З. Фостер, История трех интернационалов, М., 1959, էջ 229։
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, Երևան, 1951, էջ 487։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 3։

մարքս-լենինյան ուսմունքը նենգափոխելու, դասակարգային պայքարի հեղափոխական տեսությունը բուրժուական ռեֆորմների պահանջով փոխարինելու, բանվոր դասակարգի և բուրժուազիայի «համագործակցության» կեղծ գաղափարներ քարոզելու մեջ։

«II ինտերնացիոնալի կրախը,— գրում է Վ. Ի. Լենինը,— օպորտունիզմի կրախն է, այն օպորտունիզմի, որն աճեցվել է անցած պատմական (այսպես կոչված «խաղաղ») դարաշրջանի առանձնահատկությունների պայմաններում և վերջին տարիներս փաստական տիրապետություն է ձեռք բերել ինտերնացիոնալում»[10]։ II ինտերնացիոնալի քայքայումից հետո Վ. Ի. Լենինը պահանջում էր ոչ թե քողարկել, այլ բացատրել նրա կրախի պատճառները և անմիջապես ձեռնամուխ լինել ստեղծելու բոլոր երկրների բանվորների նոր, ավելի ամուր սոցիալիստական միասնություն։

Վ. Ի. Լենինը միաժամանակ ուսուցանում էր, որ նոր, կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու համար, նախ և առաջ, հարկավոր է խզել բոլոր տեսակի կապերը սնանկացած ինտերնացիոնալի կուսակցությունների հետ և անողոք պայքար մղել միջազգային օպորտունիզմի դեմ։

Վ. Ի. Լենինը գաղափարական և կազմակերպական վիթխարի աշխատանք ծավալեց Կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու համար։ Նա պատերազմի տարիներին լույս ընծայեց մի շարք աշխատություններ, որոնք տեսական և ծրագրային խոշոր նշանակություն ունեցան միջազգային օպորտունիզմի մերկացման, համաշխարհային բանվորական շարժումների զարգացման և Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման գործում[11]։

III ինտերնացիոնալի ստեղծման գործում կարևոր նշանակություն ունեցան Վ. Ի. Լենինի ջանքերով, պատերազմի տարիներին, հրավիրված սոցիալիստների հակապատերազմական մի շարք կոնֆերանսներ։ 1915 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Ցիմմերվալդի կոնֆերանսը, 1916 թ. ապրիլին՝ Կինտալի կոնֆերանսը։

Ցիմմերվալդի կոնֆերանսին մասնակցում էին Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների պատվիրակությունները, ընդամենը 38 պատվիրակ։ Ցիմմերվալդի կոնֆերանսում ՌՍԴԲ կուսակցության պատվիրակությունը գլխավորում էր անձամբ Վ. Ի. Լենինը։

Բոլշևիկների պատվիրակությունը Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ առաջադրում է հեղափոխական ոգով մշակված իր բանաձևը, որտեղ նշված էր՝ «...ձգտել ժողովուրդների միջև ընթացող իմպերիալիստական պատերազմը վերածելու կեղեքված դասակարգերի քաղաքացիական պատերազմի՝ ընդդեմ նրանց կեղեքողների՝ պատերազմի հանուն կապիտալիստների դասակար-

---

10 Նույն տեղում, էջ 23։

11 «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները Եվրոպական պատերազմում», 1914 թ., «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան», 1914 թ., «Օպորտունիզմը և II ինտերնացիոնալի կրախը», 1915 թ., «Ինտերնացիոնալիստների միավորման հարցի մասին», 1915 թ., «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա», 1916 թ., «Պետություն և հեղափոխություն», 1917 թ. և մի շարք ուրիշ աշխատություններ։

գի ունեզրկման, հանուն պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճման, հանուն սոցիալիզմի կենսագործման»[12]։

Վ. Ի. Լենինը Ցիմմերվալդի կոնֆերանսում վճռականորեն առաջ է քաշում II ինտերնացիոնալի կուսակցությունների հետ բոլոր տեսակի կապերը խզելու և անհապաղ նոր՝ Կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու առաջարկ։

Այս հարցերի շուրջը ուժեղ պայքար ծավալվեց կոնֆերանսում։ Տրոցկին ստեղծեց 5—6 հոգուց բաղկացած ցենտրիստական խումբ, որը հակադրվեց բոլշևիկյան բանաձևին[13]։ Չնայած Ցիմմերվալդում բոլշևիկյան պատվիրակության բանաձևը 19 դեմով մերժվեց (բանաձևի օգտին քվեարկեց 12 պատվիրակ), սակայն Ցիմմերվալդի կոնֆերանսը ունեցավ այն կարևոր նշանակությունը, որ միջազգային բանվորական շարժման մեջ առաջին անգամ բոլշևիկների պատվիրակությանը հաջողվեց արևմտյան երկրների սոցիալիստական կուսակցությունների ձախ թևերի ներկայացուցիչներին անջատել սոցիալ-շովինիստներից և համախմբել բոլշևիկների պատվիրակության շուրջը։

Դա առաջին լուրջ քայլն էր Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման գործում։

Վ. Ի. Լենինը Ցիմմերվալդյան կոնֆերանսում տարած այդ պատմական հաղթանակի մասին «Առաջին քայլը» խորագրով իր աշխատության մեջ գրում է. «1915 թ. սեպտեմբերին մենք համախմբվում ենք որպես միջազգային ձախերի մի ամբողջ խումբ, հանդես ենք գալիս մեր տակտիկայով... որը ուղղակիորեն դատապարտում է հնի տակտիկան»[14]։

Ցիմմերվալդի կոնֆերանսից հետո, բանվոր դասակարգի նկատմամբ II ինտերնացիոնալի կուսակցությունների դավաճանական գործունեությունը դարձավ ավելի ակնառու և բացահայտ. նրանք հրաժարվեցին պատերազմի վերաբերյալ Ցիմմերվալդի կոնֆերանսի ընդունած որոշումներից։ Այսպիսի պայմաններում 1916 թ. հրավիրվեց Կինտալի կոնֆերանսը։ Կինտալի կոնֆերանսին մասնակցում էին 43 հոգուց բաղկացած 25 կուսակցությունների և խմբերի պատվիրակություններ, որոնցից 12-ը ցիմմերվալդյան ձախերի պատվիրակներ էին։ Կինտալի կոնֆերանսը տեղի ունեցավ միջազգային հարաբերությունների չափազանց լարված պայմաններում։

Այդ ժամանակ կարևոր նշանակություն ունեցավ «Սպարտակի միության» ստեղծումը՝ Ռ. Լյուքսեմբուրգի, Կ. Լիբկնեխտի, Ֆ. Մերինգի և Կ. Ցետկինի գլխավորությամբ, որը միաժամանակ կրում էր «ինտերնացիոնալիստների խումբ» անունը։ Նրա ծրագիրը մշակել էր Ռ. Լյուքսեմբուրգը։

«Սպարտակի Միությունը», դիմելով Գերմանիայի պրոլետարիատին, առաջադրում էր «Կորչի՛ կառավարությունը», «Կորչի՛ պատերազմը», «Կեցցե՛ բանվորների մասսայական պայքարը», «Կեցցե՛ սոցիալիզմը» քաղաքական լոզունգները[15]։

Այսպիսի պայմաններում հրավիրվեց Կինտալի կոնֆերանսը, որի օրակարգի հարցերը մշակվել և առաջադրվել էին բոլշևիկյան պատվիրակության և անձամբ Վ. Ի. Լենինի կողմից։

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, Երևան, 1950, էջ 441։

13 Уильям З. Фостер, История трех интернационалов, էջ 256։

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, Երևան, 1950, էջ 493։

15 Տե՛ս «Хрестоматия по новейшей истории», т. I, М., 1960, էջ 19։

Այդ հարցերն էին՝ 1. Պայքար պատերազմի դեմ։ 2. Պատերազմին և նացիոնալիզմին թշնամաբար վերաբերվող սոցիալիստների ինտերնացիոնալ միավորում։ 3. Կառավարությունների դեմ կազմակերպվելու, ագիտացիա մղելու և պայքարելու գործնական միջոցառումներ և այլն[16]։

Կինտալի կոնֆերանսի աշխատանքներն ընթացան համառ պայքարի պայմաններում։

Կոնֆերանսի աջ սոցիալիստական և ցենտրիստական պատվիրակներին հաջողվեց ձայների մեծամասնությամբ մերժել բոլշևիկների պատվիրակության բանաձևի մի շարք կետեր, այն է՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու, սոցիալական կառավարությունների պարտության վերաբերյալ և այլ կետեր։

Սակայն հակառակ աջ և ցենտրիստ պատվիրակների դիմադրությանը, բոլշևիկներին այս անգամ ևս հաջողվեց արևմտյան ձախերին անջատել օպորտունիստներից և համախմբել իրենց շուրջը։ Այսպիսով, Կինտալի կոնֆերանսը երկրորդ խոշոր քայլն էր Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադրման գործում։

Կինտալի կոնֆերանսից և, մասնավորապես, 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ կապիտալիստական երկրներում բանվորական հեղափոխական շարժումները նոր թափ ստացան, հեղափոխական իրադրությունն ավելի խորացավ Ռուսաստանում և Գերմանիայում։

Միջազգային բանվորական շարժման վերելքի պայմաններում Վ. Ի. Լենինը առաջ քաշեց ցիմմերվալդյան ինտերնացիոնալից անջատվելու և նոր, Կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու հարցը։ «Ցիմմերվալդի ինտերնացիոնալը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— հենց սկզբից տատանվող, «Կաուցկիական», «կենտրոնային» դիրք բռնեց, որպիսի հանգամանքը հարկադրեց ցիմմերվալդյան ձախին, անմիջապես սահմանազծվել, առանձնանալ, հանդես գալ իր մանիֆեստով»։ Նա միաժամանակ ավելացնում էր, որ «Մեզ մոտ դեռևս չգիտեն, որ Ցիմմերվալդի մեծամասնությունը հենց կաուցկիականներ են... Ցիմմերվալդի ամբողջ մեծամասնությունը գլորվեց դեպի սոցիալ պացիֆիզմը... Ցիմմերվալդյան ձահիձն այլևս չի կարելի հանդուրժել»[17]։

Բոլշևիկների կուսակցությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ մի շարք կոնկրետ միջոցառումներ մշակեց Կոմունիստական ինտերնացիոնալ հիմնադրելու համար։ Վ. Ի. Լենինի անմիջական նախաձեռնությամբ, 1918 թ. հունվարին, Պետերբուրգում հրավիրվեց արտակարգ կոնֆերանս, որին մասնակցում էին մի շարք երկրների նորաստեղծ կոմունիստական կուսակցությունների և ցիմմերվալդյան ձախերի պատվիրակները։ Կոնֆերանսում որոշում ընդունվեց նախապատրաստական աշխատանք տանել Ցիմմերվալդից կապերը խզելու և նոր, Կոմունիստական ինտերնացիոնալ հիմնադրելու մասին։

Սնանկացած II ինտերնացիոնալի կուսակցությունները Կոմունիստական նոր ինտերնացիոնալի ստեղծումը ձախողելու, իրենց երկրներում բուրժուազիայի թուլացած դիրքերը ամրապնդելու, իմպերիալիստական պետությունների կողմից Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպվող խաչակրաց ար-

---

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, Երևան, 1951, էջ 150—151։

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, Երևան, 1951, էջ 80—81։

շավանքին նպաստելու համար փորձեցին վերականգնել II ինտերնացիոնալը։ Այս նպատակով էլ նախկին II ինտերնացիոնալի կուսակցությունները 1919 թ փետրվարին, Բեռնում հրավիրեցին իրենց կոնֆերանսը II ինտերնացիոնալի մեռած դիակին հարություն տալու համար[18]։

Ռենեգատների այս խառնաժողովին մասնակցում էին 26 երկրների աջ սոցիալիստական կուսակցություններից 102 պատվիրակներ[19], այդ թվում նաև վրացական մենշևիկների պատվիրակները։ Կոնֆերանսը ղեկավարում էին մարքսիզմի այնպիսի ռենեգատներ, ինչպիսիք էին Ն. Բրանտինգը, Կ. Կաուցկին, Է. Բեռնշտեյնը, Պ. Ռենոդելը, Հենդերսոնը, Հիլֆերդինգը և ուրիշներ։

Բեռնի ինտերնացիոնալը ամեն կերպ աջակցում էր Փարիզի խաղաղության կոնֆերանսում հավաքված իմպերիալիստական պետությունների ղեկավարներին՝ նրանց հակասովետական պլանների հաջող կենսագործման համար։ Ամենևին պատահական չէ այն փաստը, որ միջազգային իմպերիալիզմի ամենառեակցիոն պարագլուխներից մեկը՝ Ժ. Կլեմանսոն, որպես Փարիզի կոնֆերանսի նախագահ, Բեռնի սոցիալիստական կոնֆերանսի պատվիրակությանը ջերմորեն ընդունեց և խոստացավ պատվիրակության անդամներին մտցնել Փարիզի կոնֆերանսում ստեղծված հանձնաժողովների կազմի մեջ։ Այդ փաստը պերճախոս կերպով վկայում է այն մասին, թե ինչպիսի սերտ կապ էր ստեղծվել Բեռնի կոնֆերանսի սոցիալիստների և Փարիզի կոնֆերանսի իմպերիալիստների միջև[20]։

Ահա այսպիսի պայմաններում, 1919 թ. մարտի 2—6-ը Մոսկվայում տեղի է ունենում Կոմունիստական ինտերնացիոնալի առաջին և հիմնադիր կոնգրեսը։ Կոնգրեսին մասնակցում էին 13 կոմունիստական և մի շարք սոցիալիստական կուսակցությունների ձախ խմբերի պատվիրակություններ, ընդամենը 35 երկրների 52 պատվիրակներ, որոնցից 34-ը ունեին վճռական ձայնի իրավունք։ Անդրկովկասից մասնակցում էր Գուրգեն Հայկունին, որը նույնպես ուներ վճռական ձայնի իրավունք[21]։ Կոնգրեսի նիստը բացեց Վ. Ի. Լենինը։ Նրա առաջարկությամբ կոնգրեսը հոտնկայս հարգեց III ինտերնացիոնալի լավագույն ներկայացուցիչներ՝ Ռոզա Լյուքսեմբուրգի և Կարլ Լիբկնեխտի հիշատակը։ Ապա ընտրվեց երեք հոգուց բաղկացած նախագահություն, որի մեջ մտան Վ. Ի. Լենինը, Շվեյցարիայի կոմունիստական խմբի պատվիրակ Պլատենը և Գերմանիայի կոմունիստական կուսակցության պատվիրակ Գ. Հերբերյենը։ Մարտի 4-ին կոնգրեսը հռչակվեց իբրև Կոմինտերնի հիմնադիր կոնգրես։

Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիր կոնգրեսի քննարկմանն էին ներկայացված. 1. Կոմունիստական ինտերնացիոնալի հաստատումը։ 2. Զեկուցումներ առանձին կազմակերպությունների կողմից՝ իրենց երկրների տնտեսական և քաղաքական վիճակի մասին։ 3. Միջազգային կոմունիստական կոնգրեսի պլատֆորմը։ 4. Բուրժուական դեմոկրատիան և պրոլետարիատի դիկտատուրան։ 5. Բեռնի կոնֆերանսը և սոցիալիստական ուղղությունների նկատմամբ ցույց տրվելիք վերաբերմունքը։ 6. Կոմինտերնի մանիֆեստի հաս-

---

18 Տե՛ս «Протоколы первого конгресса Коминтерна», Петроград, 1921, էջ 158։

19 Տե՛ս Уильям З. Фостер, История трех интернационалов, М., 1959, էջ 257։

20 Տե՛ս «Протоколы первого конгресса Коминтерна», Петроград, 1921, էջ 158։

21 Տե՛ս «Коммунистический интернационал в документах 1919—1932 гг.», М., 1933, էջ 52—53։

տատումը։ 7. Միջազգային դրությունը և Անտանտի քաղաքականությունը։ 8. Բյուրոյի ընտրությունը և զանազան կազմակերպական հարցեր[22]։

Կոնգրեսի մասնակիցները բնորոշելով նոր ստեղծված Կոմունիստական ինտերնացիոնալի խնդիրները, իրենց մանիֆեստում հայտարարում էին.

«Մեր խնդիրը կայանում է նրանում, որպեսզի ընդհանրացնենք բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի փորձը, որպեսզի հեշտացնենք և արագացնենք կոմունիստական հեղափոխությունների հաղթանակը ամբողջ աշխարհում»[23]։

Կոնգրեսը միաձայն հաստատեց բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին Վ. Ի. Լենինի թեզիսները։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իրենց աշխատություններում բազմիցս քննության են առել բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի հարցերը։

«...Իսկապես պետությունը,— գրում է Էնգելսը Կ. Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» խորագրով աշխատության առաջաբանում,— ոչ այլ ինչ է, եթե ոչ մի մեքենա, որով մի դասակարգ ճնշում է մյուսին և այն էլ դեմոկրատական հանրապետության մեջ բնավ ոչ պակաս, քան միապետության մեջ»[24]։

Վ. Ի. Լենինը, Մարքսի և Էնգելսի այս տեսությունը նոր պայմաններում, իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների պայմաններում զարգացնում և նոր աստիճանի է բարձրացնում։ Դա կոնկրետ կերպով արտահայտվում է Կոմինտերնի հիմնադիր կոնգրեսի հաստատմանը ներկայացված իր թեզիսներում։ «Պատմությունը ուսուցանում է,— նշում է Վ. Ի. Լենինը,— որ ոչ մի ճնշված դասակարգ երբեք չի հասել և չէր էլ կարող հասնել տիրապետության՝ չապրելով դիկտատուրայի ժամանակաշրջան, այսինքն՝ նվաճելու քաղաքական իշխանությունը և բռնությամբ ճնշելու ամենամոլեգին, ամենակատաղի, ոչ մի ոճրի առաջ կանգ չառնող դիմադրությունը, որ միշտ ցույց են տվել շահագործողները»[25]։

Վ. Ի. Լենինը իր թեզիսներում ներկացնում է նաև բուրժուական դեմոկրատիայի ամբողջ կեղծիքը և հակաժողովրդական բնույթը. ցույց է տալիս, որ «...ամենադեմոկրատական բուրժուական հանրապետությունը ոչ այլ ինչ է, բայց եթե ոչ մի մեքենա բուրժուազիայի կողմից բանվոր դասակարգը ճնշելու համար, մի բուռն կապիտալիստների կողմից աշխատավոր մասսաներին ճնշելու համար»[26]։

Մարքսը և Էնգելսը իրենց աշխատություններում հատկապես դատապարտել են ամերիկյան դեմոկրատիայի հակադեմոկրատական, հակաժողովրդական բնույթը։ Էնգելսը ցույց է տալիս, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում գոյություն ունեն «...քաղաքական սպեկուլյանտների երկու մեծ ոհմակ, որոնք փոփոխակի տիրանում են պետական իշխանությանը և շահագործում են այն

---

22 Տե՛ս «Протоколы первого конгресса Коминтерна», Петроград, 1921, էջ 1։

23 Տե՛ս «Коммунистический интернационал в документах 1919—1932 гг.», М., 1933. էջ 60։

24 Տե՛ս Կ. Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատության Ֆ. Էնգելսի առաջաբանը, Երևան, 1940, էջ 26—27։

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, Երևան, 1951, էջ 595։

26 Նույն տեղում, էջ 596։

ամենաստոր միջոցներով, ամենացածր նպատակների համար, իսկ ազգն անզոր է քաղաքագետների այս երկու մեծ միությունների հանդեպ, որոնք իբր թե ծառայում են նրան, բայց իրոք կողոպտում են նրան և իշխում նրա վրա»[27]։

Կոմինտերնի առաջին կոնգրեսի որոշումները, մասնավորապես Վ. Ի. Լենինի թեզիսները բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին, գործողության որոշակի ծրագիր հանդիսացան երիտասարդ կոմունիստական կուսակցությունների համար։

Կոմինտերնի կոնգրեսը քննարկեց նաև միջազգային գրության և Անտանտի պետությունների քաղաքականության հարցերը։ Ինչպես զեկուցման, այնպես էլ այս հարցերի առթիվ ընդունված որոշման մեջ դատապարտվում է թե՛ գերմանա-թուրքական բլոկը և թե՛ Անտանտի ու ԱՄՆ-ի իմպերիալիստական գավթողական քաղաքականությունը երիտասարդ Սովետական Ռուսաստանի նկատմամբ։

Ինչպես հայտնի է, Կայզերական Գերմանիան 1918 թ. օգտագործելով Սովետական Ռուսաստանի համար ստեղծված ծանր դրությունը, ձգտում էր մասնատել Սովետական Ռուսաստանը, գավթել Մերձբալթյան մարզերը, Բելոռուսիան, Ուկրաինան, Կովկասը և մի շարք ուրիշ տերիտորիաներ։

Սովետական Ռուսաստանի նկատմամբ նույնպիսի նվաճողական քաղաքականություն էին վարում նաև Կայզերական Գերմանիայի դաշնակիցներ՝ թուրքական իմպերիալիստները։

1920 թ. Կոմինտերնի երկրորդ կոնգրեսում ունեցած իր ելույթում Կոստանդնուպոլսի կոմունիստական կազմակերպության ղեկավար Իսմայիլ Հակի-փաշան մերկացնելով երիտասարդ թուրքերի պանթուրքական քաղաքականությունը, նշում էր, որ 1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո, երբ իշխանության գլուխ անցան երիտասարդ թուրքերը, անմիջապես առաջ քաշեցին իրենց պանթուրքական պլանները, որոնք նախատեսում էին Օսմանյան կայսրության շուրջը համախմբել մի վիթխարի տերիտորիա՝ սկսած Կաղանից, Միջին Ասիայից և վերջացրած Կովկասով, Թուրքիայով և Պարսկաստանի հյուսիսային մասով[28]։

Երիտթուրքերը իրենց այդ նվաճողական պլանը Սովետական Ռուսաստանի նկատմամբ սկսեցին իրականացնել 1918 թ. Բրեստի կողոպտիչ պայմանագրի հիման վրա։ Գերմանա-թուրքական բլոկը ընդհանուր առմամբ Սովետական Ռուսաստանից բռնի կերպով գավթեց մեկ միլիոն քառակուսի կիլոմետր տարածությամբ տերիտորիա, որտեղ ապրում էր 43 միլիոն մարդ։ Բրեստի պայմանագրի հետևանքով խիստ տուժեցին նաև Անդրկովկասի ժողովուրդները, մասնավորապես հայ ժողովուրդը, որը զրկվեց Կարսի ու Արդահանի մարզերից։ Այդ պատճառով էլ Վ. Ի. Լենինը Բրեստի հաշտությունը անվանել է «Դժբախտ հաշտություն»։

Վճռականորեն դատապարտվեց գերմանա-թուրքական ագրեսիան Սովետական Ռուսաստանի նկատմամբ։ Դաշնակից պետությունները,— Կոմինտերնի առաջին կոնգրեսի բնորոշմամբ, իրենց գիշատիչ և մարդատյաց քաղաքա-

---

27 Կ. Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատության Ֆ. Էնգելսի առաջաբանը, Երևան, 1940, էջ 25։

28 Տե՛ս «Протоколы второго конгресса Коминтерна», М., 1934, էջ 132—133։

կանությամբ, ամենից կատաղի կերպով հանդես են դալիս սովետական հանրապետության նկատմամբ[29]։

Կոնգրեսը միաժամանակ դատապարտեց Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարություններին այն բանի համար, որ նրանք իրենց դեսպանների միջոցով սովետական երկրում ծավալում են լրտեսական, դիվերսիոն գործունեություն։ Անտանտի պետությունները և ԱՄՆ-ը, ռազմական, ֆինանսական և այլ բնույթի օգնություն էին ցույց տալիս սպիտակ գվարդիական գեներալներին՝ Կոլչակին, Դենիկինին, Կրասնովին և բուրժուա-նացիոնալիստական կառավարություններին։

Կոմինտերնի հիմնադիր կոնգրեսը որոշում ընդունեց III կոմունիստական ինտերնացիոնալի կառուցվածքի մասին։ Որոշման համաձայն, ստեղծվեցին ղեկավարման երկու օրգան՝ գործադիր կոմիտե և բյուրո։ Կոմինտերնի բարձրագույն օրգանը հանդիսանում էր նրա համաշխարհային կոնգրեսը։ Մեկ կոնգրեսից մինչև մյուս կոնգրեսը ընկած ժամանակամիջոցում Կոմինտերնի աշխատանքները գլխավորում էին գործադիր կոմիտեն և նրա կողմից ընտրված բյուրոն։

Կոմինտերնի ղեկավարությունը իրականացվում էր դեմոկրատական ցենտրալիզմի հիման վրա։ «III կոմունիստական ինտերնացիոնալի համաշխարհային պատմական նշանակությունը այն է,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որ նա սկսել է կենսագործել Մարքսի մեծագույն լոզունգը, լոզունգ, որն ամփոփում է սոցիալիզմի ու բանվորական շարժման դարավոր զարգացումը, մի լոզունգ, որն արտահայտվում է պրոլետարիատի դիկտատուրա հասկացողությամբ»[30]։

Կոմունիստական ինտերնացիոնալի գործունեության սկզբնական շրջանում գլխավոր վտանգը կայանում էր նրանում, որ II ինտերնացիոնալի սնանկացումից հետո նրա ցենտրիստական կուսակցություններն իրենց հեղինակությունը բանվոր դասակարգի մեջ չկորցնելու համար հեռացան երկրորդ ինտերնացիոնալից և դիմեցին Կոմինտերնի երկրորդ կոնգրեսին, Կոմինտերնի մեջ ընդունվելու համար, միաժամանակ ձգտելով պահպանել իրենց նախկին դիկտատուրան և ռեֆորմիստական կազմակերպական սկզբունքները։

Կոմինտերնի երկրորդ կոնգրեսը, որը կայացավ 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, հաստատեց Վ. Ի. Լենինի կողմից մշակված «21 պայմանները», որոնք Կոմինտերնի դռները փակեցին ռեֆորմիստական կուսակցությունների առջև։ «Կոմինտերնի 21 պայմանները» և կոնգրեսի մյուս որոշումները զգալի չափով նպաստեցին II ինտերնացիոնալի կուսակցությունների պառակտմանը, որի հետևանքով մի շարք երկրներում առաջացան մարքսիստական կոմունիստական կուսակցություններ։

Այդ ժամանակ միջազգային կոմունիստական շարժման մյուս գլխավոր վտանգը «ձախության» հիվանդությունն էր։ Մի շարք կոմունիստական կուսակցություններ դեռ պարզ ու որոշակի պատկերացում չունեին Կոմունիստական ինտերնացիոնալի տակտիկայի և ստրատեգիայի մասին։

Կոմինտերնի երկրորդ կոնգրեսի որոշումները և մասնավորապես այդ շրջանում լույս տեսած Վ. Ի. Լենինի «Ձախության» մանկական հիվանդությունը

---

29 Տե՛ս «Коммунистический интернационал в документах 1919—1932 гг.», М., 1933, էջ 150։

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, Երևան, 1951, էջ 371։

կոմունիզմի մեջ» խորագրով աշխատությունը, կարևոր նշանակություն ունեցան եղբայրական կոմունիստական կուսակցություններում այդ վտանգը հաղթահարելու համար։

Վ. Ի. Լենինի «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունը,— գրում է Ու. Զ. Ֆոստերը,— հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմի կլասիկ աշխատություններից մեկը»[31]։

Կոմունիստական ինտերնացիոնալը իր գործունեության հաջորդ էտապում պայքարը հիմնականում կենտրոնացնում է տրոցկիզմի դեմ, որը Կոմունիստական ինտերնացիոնալի հինգերորդ և վեցերորդ կոնգրեսների շրջանում (1924—1927) ամենավտանգավոր ուղղությունն էր հանդիսանում միջազգային կոմունիստական շարժման մեջ։

Եղբայրական կոմունիստական կուսակցությունները և առաջին հերթին Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը ջախջախեցին տրոցկիզմը, որով և ուժեղացավ բոլշևիկների ազդեցությունը Կոմինտերնի և նրա սեկցիաների շարքերում։ 1928 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում հրավիրվեց Կոմինտերնի վեցերորդ կոնգրեսը, որտեղ մասնակցում էին 57 երկրների կոմունիստական կուսակցությունների 515 պատվիրակներ։ Այդ կոնգրեսը նշանավոր էր նրանով, որ այստեղ առաջին անգամ հաստատվեց Կոմինտերնի ծրագիրը։ Այդ ծրագրում բնութագրվում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, քննադատվում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, որոնք առաջ էին քաշում «գերիմպերիալիզմի» հակալենինյան տեսությունը և խաղաղ ճանապարհով կապիտալիզմի ներաճումը սոցիալիզմի։ Կոմինտերնի ծրագրում նշվում է, որ սոցիալ-դեմոկրատները իրենց առջև խնդիր են դրել քայքայել պրոլետարիատի մարտական միասնությունը և իմպերիալիզմի դեմ մղվող պայքարը։

Ծրագրում միաժամանակ նշվում է, որ Կոմունիստական ինտերնացիոնալի վերջնական նպատակն է համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը փոխարինել համաշխարհային կոմունիստական սիստեմով։

Վեցերորդ կոնգրեսից հետո Կոմունիստական ինտերնացիոնալի մի շարք անհետաձգելի հարցերի հետ միասին կարևոր տեղ գրավեցին միասնական ճակատի և ֆաշիզմի դեմ մղվող պայքարի հարցերը, մասնավորապես Գերմանիայում իշխանությունը ֆաշիստների կողմից գավթելուց հետո։

«Պատմության անիվը,— հայտարարում էր Գ. Դիմիտրովը 1933 թ. դեկտեմբերին, Լայպցիգի դատարանում,— պտտվում է, առաջ է շարժվում դեպի խորհրդային Եվրոպայի կողմը, դեպի խորհրդային հանրապետությունների համաշխարհային միության կողմը։ Եվ այդ անիվը, որ առաջ է մղում պրոլետարիատը՝ Կոմունիստական ինտերնացիոնալի ղեկավարությամբ, չի հաջողվի կանգնեցնել՝ ոչ բնաջնջող միջոցառումներով, ոչ տաժանակիր աշխատանքի դատապարտող դատավճիռներով, ոչ մահապատիժներով։ Այդ անիվը պտտվում է և կպտտվի մինչև կոմունիզմի վերջնական հաղթանակը»[32]։

---

31 Տե՛ս Уильям З. Фостер, История трех интернационалов, М., 1959, էջ 311։

32 Գ. Դիմիտրով, Ֆաշիստական դատարանի առաջ, Երևան, 1937, էջ 5։

նիստական կուսակցությունների 510 պատվիրակներ, որոնք ներկայացնում էին տարբեր երկրների 3 մլն. 141 հազար կոմունիստների։

Յոթերորդ կոնգրեսի աշխատանքների առանցքը կազմում էր միասնական ճակատի ստեղծման հարցը, որը մշակվել էր դեռ Վ. Ի. Լենինի կողմից՝ Կոմինտերնի երրորդ և չորրորդ կոնգրեսների շրջանում։

Կոնգրեսում, միասնական ճակատի ստեղծման և ֆաշիզմի դեմ մղվող պայքարի հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Գ. Դիմիտրովը։ «Ֆաշիզմը,— նշեց նա,— ֆինանսական կապիտալի ամենից ավելի ռեակցիոն, ամենից ավելի շովինիստական, ամենից ավելի իմպերիալիստական տարրերի բացահայտ տեռորիստական դիկտատուրան է»։ Գ. Դիմիտրովը միաժամանակ տվեց գերմանական ֆաշիզմի բնութագիրը. «Գերմանական ֆաշիզմը հանդես է գալիս իբրև միջազգային հակահեղափոխության հարվածող բռունցք, իբրև իմպերիալիստական պատերազմի գլխավոր հրձիգ, իբրև համայն աշխարհի աշխատավորության մեծ հայրենիքի՝ Խորհրդային Միության դեմ ուղղված խաչակրաց արշավանքի նախաձեռնողը»[33]։

Գ. Դիմիտրովը իր զեկուցման մեջ առաջարկեց ստեղծել հակաֆաշիստական ժողովրդական լայն ճակատ։

Կոմինտերնի յոթերորդ կոնգրեսը պլան մշակեց միասնական պրոլետարական հակաֆաշիստական լայն ճակատ ստեղծելու, պատերազմի հրձիգներին մեկուսացնելու համար։

Կոմունիստական ինտերնացիոնալը պատվով կատարեց իր առջև դրված խնդիրները ինչպես ֆաշիզմի դեմ մղվող պայքարում, այնպես էլ միջազգային կոմունիստական շարժման զարգացման ասպարեզում։ Կոմունիստական ինտերնացիոնալի ջանքերով ստեղծված կոմունիստական կուսակցությունները անգնահատելի ավանդ մուծեցին երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի ջախջախման և պատերազմից հետո սոցիալիստական լագերի ստեղծման գործում։

Կոմունիստական ինտերնացիոնալը 1943 թ. լուծարքի ենթարկվեց։ Բայց նրա հեղափոխական ոգին ու պատմական գործը շարունակում են ոգեշնչել համաշխարհային պրոլետարիատին և բոլոր ճնշված ժողովուրդներին սոցիալիզմի և դեմոկրատիայի համար մղվող պայքարում։

Նշելով Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադրման 50-ամյակը, Սովետական Միության և ամբողջ աշխարհի կոմունիստները երախտագիտությամբ լի իրենց հայացքները ուղղում են մեծ Լենինի կերպարին։ Լենինի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ստեղծված կոմունիստական ինտերնացիոնալը տասնամյակների իր գործունեության ընթացքում դաստիարակեց և կոփեց բանվոր դասակարգի գործի պայքարին անսահմանորեն նվիրված բազմաթիվ ջոկատներ, միջազգային բանվորական շարժումը միացրեց մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հետ, վիթխարի պայքար ծավալեց համաշխարհային կոմունիստական շարժման մեջ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների հաղթանակի համար։

Դաստիարակվելով լենինյան գաղափարներով, աննկուն պայքար մղելով համաշխարհային կապիտալիզմի և իմպերիալիզմի դեմ, կոմունիստական կու-

---

33 Տե՛ս Գ. Դիմիտրով, Ֆաշիզմի հարձակումը և Կոմունիստական ինտերնացիոնալի խնդիրները ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայքարում, Երևան, 1935, էջ 11։

սակցությունները մեծ հեղինակություն նվաճեցին և վիթխարի ուժ դարձան ժամանակակից հասարակական կյանքում։

Իմպերիալիզմը, կորցնելով ոտքի տակի հողը, ներկայումս հուսահատ ձիգեր է թափում իր գոյությունը երկարաձգելու համար։ Այդ նպատակով նա աշխարհի տարբեր երկրներում, դիմում է բացահայտ ագրեսիվ գործողությունների, կազմակերպում է պրովոկացիաներ խաղաղասեր ժողովուրդների նկատմամբ, տնտեսական ճնշման և շանտաժի միջոցով փորձում է վերականգնել իր նախկին դիրքերը Աֆրիկայում, Ասիայում և աշխարհի այլ մասերում։

Իմպերիալիզմի այդ դավադրությունների դեմ անսասան պատնեշ են հանդիսանում կոմունիստական կուսակցությունները, որոնք մարքսիզմ-լենինիզմի հաղթական գաղափարներով զինված, բանվոր դասակարգին և հասարակության բոլոր առաջադեմ ուժերին առաջնորդում են կապիտալի և իմպերիալիզմի լծից ազատագրվելու, կոմունիստական հասարակարգ կառուցելու ուղիով։

Բանվոր դասակարգի ինտերնացիոնալ կազմակերպության՝ Կոմունիստական ինտերնացիոնալի և նրա դաստիարակած կոմունիստական կուսակցությունների գործունեության փորձը ցույց է տալիս, որ միջազգային բանվորական շարժման հաջողությունների երաշխիքը կոմունիստական կուսակցությունների անսահման նվիրվածությունն է մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին և կոմունիստական ու բանվորական շարժման կուռ միասնությունը։

Լենինի հիմնադրած և դաստիարակած Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը աչքի լույսի պես պահպանում է կոմունիստական ինտերնացիոնալի այդ մեծագույն ավանդները։ Կատարելով իր ինտերնացիոնալ պարտքը, նա ամեն կերպ օգնում է եղբայրական կոմունիստական կուսակցություններին և կապիտալի շահագործումից ու գաղութային ստրկությունից ազատագրված ժողովուրդներին՝ ամրապնդելու ձեռք բերված նվաճումները։

Նշելով կոմունիստական կուսակցությունների համերաշխության ու միասնության հիմքերը, Լ. Ի. Բրեժնևը Էհական միացյալ բանվորական կուսակցության 5-րդ համագումարում ասաց. «մեր գաղափարական հիմքը՝ մարքսիզմ-լենինիզմն է, ընդհանուր թշնամին՝ իմպերիալիզմը, ընդհանուր նպատակը՝ կոմունիզմի հաղթանակը»։

Առաջնորդվելով այդ սկզբունքներով, Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը անդուլ պայքար է մղում համաշխարհային կոմունիստական շարժման միասնությունը և համախմբվածությունը ապահովելու համար։